



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

СТРАТЕГИЯ ПРЕПОДАВАНИЯ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ РАЗГОВОРНОГО СТИЛЯ ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА

Ашхен Давидовна Гюрджинян

ashkhen.gyurjinyan@gmail.com

*Преподаватель кафедры французской и романской филологии,
Государственный университет им. В.Я. Брюсова
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

В статье рассматривается стратегия преподавания фразеологических единиц разговорного стиля французского языка. Основное внимание уделяется стратегиям обучения лексике и фразеологии, таким как метакогнитивные, когнитивные и компенсаторные. В рамках метакогнитивной стратегии характеризуются декларативные и процедурные знания. С помощью метакогнитивной стратегии представляется происхождение фразеологизмов. Отдельное внимание уделено разработке методики преподавания французских узуальных фразеологических единиц. Четкими примерами показаны особенности преподавания фразеологических единиц, особенно в переводе, как мотивированных, так и немотивированных французских фразеологизмов. Предлагается обучать французским топонимам и антропонимам с использованием компенсаторной стратегии, так как непосредственные контакты армяноязычных студентов с французами недостаточны.

Ключевые слова: познавательная стратегия, декларативные, процедурные знания, фразеологическая единица.

Ներածություն

Դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունը ներկայումս պետք է հաշվի առնել, որ դրանք արտացոլում են ժողովրդի ազգային մշակույթը և աշխարհայացքը: Ուստի դրանք ուսումնասիրելիս անհրաժեշտ է օգտագործել լեզվի և մշակույթի կապի վրա հիմնված մոտեցումները:

Դարձվածքները հիմնականում ուսուցանվում են բառապաշարի տարբեր միավորների ուսուցմանը համընթաց, և այդ ընթացքում կիրառվում են գրեթե նույն ռազմավարությունները: Խնդիրն այն է, որ տեսական և գործնական տարբեր դասընթացներում չի առաջարկվում դարձվածապաշարի ուսուցման առանձին ռազմավարություն: Միաժամանակ գաղտնիք չէ, որ ուսուցման տարբեր փուլերում խնդիր է դրվում հստակեցնել նվազագույն դարձվածային պաշարը, ընտրել դարձվածանու ուսուցման համար նախատեսված համապատասխան տեքստեր, մշակել վարժություններ և առաջադրանքներ:

Հետազոտության հիմնախնդիրները

Մի կողմից դժվարություն է ներկայացնում բուն դարձվածապաշարի ուսուցողական նպատակներով ընտրության հիմնախնդիրը, մյուս կողմից՝ խնդիր է դրվում ուսուցման ռազմավարություններն ընտրել ըստ ֆրանսերեն դարձվածային միավորների թարգմանության, յուրացման, ակտիվ բանավոր խոսքում կիրառելու տեսանկյուններից: Առաջնային է նաև տարաբնույթ դարձվածքներ պարունակող տեքստերի կամ խոսույթների ընտրության հիմնախնդիրը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ֆրանսերեն խոսակցական ոճի տարբեր դարձվածքների ուսուցման ընտրության և կիրառման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նորույթը

Ֆրանսերեն խոսակցական ոճի դարձվածային միավորների տիպական օրինակներով հիմնավորվում են դարձվածքների ուսուցման, յուրացման ռազմավարությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը

Անհրաժեշտ ռազմավարություն ընտրելու և մշակելու նպատակով վերլուծվել են հաճախակի հանդիպող ֆրանսերեն խոսակցական ոճի դարձվածային միավորները:

Հետազոտության գործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքներից կարող են օգտվել օտար լեզուներ ուսումնասիրող ուսանողները, դասախոսները, ուսուցիչները, ինչպես նաև սույն հիմնախնդրով զբաղվող գիտնականները:

Հետազոտության մեթոդները

Կիրառվել են դարձվածային միավորների բաղադրիչային վերլուծության, ծագումնաբանական վերլուծության, իրական լեզվական միջավայրում տարբեր իրադրությունների մոդելավորման մեթոդները:

Հետազոտության նպատակը

Արդյունավետ ուսուցման ռազմավարություն ընտրելու և մշակելու նպատակով ուսումնասիրել և վերլուծել ֆրանսերեն խոսակցական ոճի դարձվածային միավորները:

Հետազոտության խնդիրները

- Ուսուցողական նպատակներով ընտրել ֆրանսերեն դարձվածային միավորներ և մշակել դրանց ուսուցման ռազմավարությունը:

- Վերլուծել ֆրանսերեն դարձվածային միավորների տիպական օրինակներն ըստ ուսուցման տարբեր ռազմավարությունների կիրառման նպատակահարմարության և արդյունավետության:

Ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունների ընտրության սկզբունքները

Ակնհայտ է, որ ֆրանսերենի մասնագիտական դասընթացում ուսանողները պետք է կարողանան կիրառել բառապաշարի և դարձվածային պաշարի ուսուցման և՛ ճանաչողական, և՛ վերճանաչողական ռազմավարություններ, քանի որ վերջինս կիրառումը պահանջում է ուսանողից լեզվաբանական, մասնագիտական կոմպետենցիայի ավելի բարձր մակարդակ:

Ինչպես հայտնի է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայից և լեզվադիդակտիկայից, ճանաչողական ռազմավարությունը ենթադրում է ուսուցանվող լեզվանյութի իմաստավորում, մտապահում և կիրառում: Վերճանաչողական ռազմավարությունը ներկայացնում է գործողությունների հաջորդականություն, որն ապահովում է ճանաչողական գործընթացների պլանավորում, վերահսկողություն, ինչպես նաև գործունեության նպատակների և վերջնարդյունքի համաձայնեցում:

Ըստ Շամոյի և Ռոբինսի՝ «վերճանաչողական գիտելիքները բաժանվում են երկու խմբի՝ դեկլարատիվ և ընթացակարգային» [13: 18–19]: Դեկլարատիվ գիտելիքները գիտելիքներ են սեփական անձի, աշխարհի, առաջադրանքի, ռազմավարությունների մասին: Ընթացակարգային գիտելիքները հավասարվում են վերճանաչողական ռազմավարություններին և ներառում են պլանավորում, մշտադիտարկում, ուսումնական խնդիրների լուծում, գնահատում: Վերճանաչողական

ռազմավարության կարևոր պայման է այն, որ սովորողներն իրենք են որոշում ինչպես կազմակերպել ուսումնառության գործընթացը: Վերջիվերջո դա ենթադրում է ինքնակառավարման կարողությունների ձեռքբերում [5: 111–126]:

Բառապաշարի դասավանդման փոխհատուցման ռազմավարությունները տեխնիկա են, որոնք թույլ են տալիս հաղթահարել լեզվական ռեսուրսների դեֆիցիտը կամ խոսքի հմտությունների անբավարար զարգացումը [8: 230–245]:

Դարձվածքների ուսուցման գործընթացում, ինչպես և բառապաշարի ուսուցման դեպքում, անհրաժեշտ է կիրառել փոխհատուցման ռազմավարություններ, օրինակ՝ «հուշումների օգտագործումը» և «մայրենի լեզվին անցումը»: Մայրենի լեզվին անցման ռազմավարությունը ներառում է թիրախային լեզվից դարձվածքի թարգմանությունը, ինչպես նաև դրա լեզվաբանական, գործաբանական և այլ բնույթի վերլուծությունը: Այդ գործընթացում կարևորվում է նաև արտալեզվական միջոցների, ինչպես նաև հոմանիշ և հականիշ կառուցվածքների արդյունավետ կիրառումը:

Խոսքի բառային կողմը դասավանդելիս փոխհատուցման ռազմավարությունները ներառում են հոմանիշի, հականիշի, առարկայի նկարագրության, բացատրության օգտագործումը (օրինակ, թե ի՛նչ տեսք ունի առարկան կամ ինչի՛ է այն ծառայում) [8: 230–245]:

Վերձանաչողական, ճանաչողական, փոխհատուցման և այլ ռազմավարություններ արդյունավետ է կիրառել հատկապես ֆրանսերեն խոսակցական դարձվածքների ուսուցման ժամանակ:

Ֆրանսերեն խոսակցական ոճի դարձվածքների լեզվառական առանձնահատկությունները

Ֆրանսերեն խոսակցական լեզվում արտահայտիչ միջոցների շարքում կարևոր տեղ են գրավում խոսակցական արտահայտություններն ու դարձվածքները: Դրանք մարմնավորում են կուտակված ժողովրդական իմաստությունը, նրանց մեջ արտացոլվում է ժողովրդի խոր հումորը. ժողովուրդը հակված է իր խոսքում օգտագործել մեծ քանակությամբ չափանգանցություններ և հեզնանք՝ միտքը պատկերավոր ներկայացնելու նպատակով:

Ֆրանսերեն խոսակցական դարձվածային միավորները արձանագրվում են խոսակցական լեզվի հատուկ միալեզու բառարաններում, որոնց առցանց տարբերակները ևս կան և հասանելի են ֆրանսերեն սովորող ուսանողներին [14, 16]: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ խոսակցական ոճի սահմանումը մեծ դժվարություն է ներկայացնում. այն ինչ-որ տեղ պայմանական է:

Խոսակցական դարձվածային արտահայտությունները բարձր արտահայտչականություն ունեն, և խոսողը դրանք հաճախ օգտագործում է զրուցակցի վրա հուզական ազդեցություն ունենալու, իր խոսքը ավելի համոզիչ դարձնելու կամ համապատասխան արձագանք առաջացնելու նպատակով: Դրանց արտահայտչականությունը պայմանավորված է հատկապես փոխաբերական բնույթով: Բնորոշ են հետևյալ օրինակները՝ *lâcher un mot* – բացբերանություն անել, *noyer le poisson* – հարցից խուսափել կամ թյուրիմացություն ստեղծել, *Qui ne hasarde rien, n'a rien* – Ով ռիսկի չի դիմում, շամպայն չի խմում:

Խոսակցական դարձվածքներում հաճախ հանդիպում են կրկնաբանություններ, որոնք ավելի են ընդգծում արտահայտության հուզական կամ արտահայտչական բնույթը, ինչպես՝ *bon gré mal gré* – կամովի թե՛ հարկադրված, ուզես թե՛ չուզես, *ni queue ni tête* – առանց իմաստի, ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ [6: 167–172]:

Դարձվածքները հաճախ օգտագործվում են խոսքին զվարճալի, հեզնական երանգ հաղորդելու նպատակով, օրինակ՝ *changer d'opinion comme de chemise* – կարծիքը հաճախակի փոխել, ձեռնոցի պես փոխել, *manger comme quatre* – ուտել շատ, կարծես չորս հոգու համար, *aller à toute vapeur, mettre le turbo, appuyer sur le champignon (l'accélérateur)* – սլանալ ամբողջ արագությամբ [7: 113–116]:

Այս արտահայտությունները ոչ միայն հարստացնում են լեզվամտածողությունը, այլև նպաստում խոսքի բնականությանը և հուզական ազդեցությանը:

Օտար լեզվի ոճաբանության դասավանդման ընթացքում գրեթե անընդհատ հանդիպում ենք դարձվածային միավորներում դրսևորվող չափազանցությունների, պատկերավոր համեմատությունների, զուգահեռականությունների և այլաբանությունների [11: 16–22]: Ուսանողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նշված դարձվածքների նկատմամբ, քանի որ պատրաստի խոսքային այդ կառույցները դրանց ֆրանսերեն բանավոր խոսքն ավելի հուզական և արտահայտիչ են դարձնում: Խնդիր է դրվում այդ դարձվածքները ներմուծել համապատասխան տեքստերի, խոսքային նմուշների միջոցով, քանի որ դրանց համապատասխան ընտրությամբ ներկայացված ցանկի սոսկ մտապահումը, առանց համապատասխան օրինակների, հնարավոր չէ իրականացնել: Առաջարկվում է հնարավորինս շատ զուգորդումներ ներմուծել: Վերձանաչողական ռազմավարության կիրառմամբ հնարավոր է դառնում հասկանալ նշված դարձվածքների գործածման ոճական առանձնահատկությունները:

Հատկապես արդյունավետ է այն խոսակցական դարձվածքների ներմուծումը և յուրացումը, որոնք խոսքը հարստացնում են չափազանցություններով [18: 167]: Այսպես, օրինակ, *avoir une faim de loup* դարձվածքն արտահայտում է ծայրահեղ քաղցի զգացումը, *crier à tue-tête* –

բղավել շատ բարձր, *être mort de rire* – ծիծաղից մեռնել, *ne pas en croire ses yeux* – աչքերին չհավատալ, զարմանալ՝ ապշել:

Ֆրանսերեն սովորության ղարձվածքների ուսուցման ռազմավարությունը

Ֆրանսերեն սովորության ղարձվածքների ուսուցումը նպաստում է ուսանողների հենքային գիտելիքների ձևավորմանը և զարգացմանը: Այս գործընթացի ընթացքում ուսանողները աստիճանաբար յուրացնում են դրանց հաղորդակցման ձևը, ինչպես նաև զարգացնում ընդհանուր մտածելակերպը: Այդ համատեքստում արդյունավետ է կիրառել փոխհաստոցման ռազմավարությունը, քանի որ լեզվակիրների հետ անմիջական շփման բացն անհրաժեշտ է լրացնել սովորության ղարձվածքների հետևողական ներմուծմամբ:

Դրա հետ մեկտեղ արդյունավետ է ուսուցանել հունական, հռոմեական ծագում ունեցող ղարձվածքները, քանի որ Ֆրանսիան պատմամշակութային առումով համարվում է հռոմեական կայսրության իրավահաջորդը, և հունական ու հռոմեական դիցաբանության շատ հայտնի կերպարներ, պատմական իրադարձություններ հեշտությամբ են մեկնաբանվում ֆրանսիացիների կողմից: Հատկանշական է, որ լատիներեն շատ ղարձվածքներ մի շարք լեզուներ փոխառել են ֆրանսերենի միջոցով: Օրինակ՝ *passer le Rubicon* – անցնել Ռուբիկոնը, *victoire à la Pyrrhus* – պյուռոսյան հաղթանակ, *l'épée de Damoclès* – դամոկլյան սուր, *le nœud gordien* – գորդյան հանգույց, *sois comme le lit de Procruste* – պրոկրուստյան մահիճ, *les travaux d'Héraclès* – Հերակլեսի սխրանքները (քաջագործությունները), *les écuries d'Augias* – ավգյան ախոռներ, *talon d'Achille* – աքիլլեսյան գարշապար, *la boîte de Pandore* – պանդորայի արկղ:

Ֆրանսերեն դարձվածային արտահայտություններն ուսումնասիրելու արդյունավետ միջոց է թվականներ պարունակող դարձվածքների ներառումը ուսումնական գործընթաց: Օրինակներ՝ *comme deux gouttes d'eau* – ինչպես ջրի երկու կաթիլ, *entre deux feux* – երկու կրակի միջև, *joindre les deux bouts* – ծայրը ծայրին հասցնել, *entre deux âges* – միջին տարիքի, երկու տարիքի միջև, *entre deux soleils* – արշալույսից մայրամուտ:

Երբ դարձվածքի ներքին ձևը պարզ է, և ելնելով բաղադրիչներից՝ հնարավոր է հասկանալ նրա իմաստը, ապա այն համարվում է իմաստաբանորեն հիմնավորված: Հատկապես այս դեպքում խոսքը վերաբերում է համեմատական արտահայտություններին, որոնք առավելաբար ամբողջովին հիմնավորված են, ինչպես՝ *crever comme un chien* – տառապել շան պես, *clair comme le jour* – ցերեկվա պես պարզ, *rouge comme une tomate* – լուրիկի պես կարմիր և այլն:

Դարձվածային միավորների ծագումնաբանության ուսումնասիրության հարցը համապատասխան օրինակներով քննարկվում է նաև բառագիտության դասընթացում, ինչպես՝ *gros bonnet, le jeu ne vaut pas la chandelle, honni soit qui mal y pense, ne pas être dans son assiette, pendre la crémaillère* [12: 79–83]:

Այսպիսով, վերձանաչողական ռազմավարության կիրառումը նպաստում է պատճառաբանված, չպատճառաբանված դարձվածքների ուսուցմանը:

Հատկանվանական բաղադրիչով դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունը

Հատկապես արդյունավետ է հատկանվանական (օնոմաստիկ) բաղադրիչով դարձվածային միավորների ուսուցումը: Ինչպես և մյուս դեպքերում, արդյունավետ է ուսուցողական նպատակներով դարձվա-

ծային միավորների համեմատությունը: Համեմատությունը վերաբերում է ոչ միայն ֆրանսերեն և հայերեն դարձվածքներին, այլև դրանց հիմքում ընկած ավանդույթներին, սովորույթներին, լեզենդներին և այլն: Տարբեր՝ վերճանաչողական, ճանաչողական, փոխհատուցման ռազմավարությունների կիրառումը նպաստում է դարձվածքների միջոցով ֆրանսիական ավանդույթների, սովորույթների, ուսուցմանը, մտածելակերպի զարգացմանը:

Այդ ռազմավարությունը կարելի է անվանել բազմակողմանի: Մի կողմից ուսանողն ուսումնասիրում է Ֆրանսիայի լեզենդները, առասպելները, հավատալիքները, նախապաշարմունքները, մյուս կողմից՝ յուրացնում է դրանք ներկայացնող դարձվածքները:

Ֆրանսիացիների հավատալիքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, անկախ այն հանգամանքից, թե դրանք ժամանակակից ֆրանսերենում ի՞նչ հաճախականությամբ են գործածվում: Հայալեզու ուսանողն ավելի արագ է յուրացնում այս կամ այն դարձվածքը, եթե դրանք վերաբերում են հավատալիքներին: Օրինակ՝ *le hibou* – բու, չշփվող, *triste comme un hibou* – բլի պես տխուր, *Je ressemble au pélican du désert, je suis devenu comme le hibou des ruines* – Ես նման եմ հավալուսնին անապատում. Ես դարձա ինչպես բու ավերակների վրա: Այսօր դարձվածային այդ միավորներից շատերը հնացած են, և ֆրանսախոսների բացարձակ մեծամասնությունը դրանք չի ընկալում:

Արդյունավետ ռազմավարություն է դարձվածքների մասին հայերեն և ֆրանսերեն տեսական գրականության՝ մենագրությունների, հոդվածների ընթերցանությունը: Դա հնարավորություն է ընձեռում նրանց խոր գիտելիքներ ձեռք բերելու երկու ժողովուրդների ու նրանց լեզուների դարձվածքների մասին, դասակարգելու դրանք, համեմատական գուգահեռներ անցկացնելու՝ կազմելով դրանց ցանկերը և այլն:

Կարևոր ռազմավարություն է դարձվածային միավորների հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հայերեն թարգմանությունը: Այս առումով օգտակար կարող են լինել դարձվածաբանական ինչպես թարգմանական, այնպես էլ միալեզվյան բառարանները [1–3, 19]:

Առավել տարածված անգլերեն և ֆրանսերեն ասացվածքները դրսևորում են իմաստային-ոճական այնպիսի հատկություններ, ինչպիսիք են բազմիմաստությունը, բառախաղը, փոխանունությունը, չափազանցությունը, հեզնանքը, կրկնաբանությունը, հարանշանակությունը և այլն [17: 391–392]:

Կարևոր ռազմավարություն է դարձվածային միավորների միջոցով ոճական հնարների ուսումնասիրությունը: Ոճական հնարների ուսումնասիրությունը միաժամանակ նպաստում է ֆրանսերեն դարձվածքների յուրացմանը:

Հայերեն և ֆրանսերեն դարձվածքների համեմատությունը ոճական առանձնահատկությունների տեսանկյունից կարող է բացահայտել ոչ միայն կիրառվող ոճերի, այլև լեզվամտածողության նմանությունն ու տարբերությունները:

Այսպիսով՝ խնդիր է դրվում ուսումնասիրվող դարձվածքները վերլուծել տարբեր տեսանկյուններից:

Դարձվածային պաշարի ուսումնասիրության կարևոր ռազմավարությունն այն է, որ ուսանողները յուրացնեն դարձվածքները՝ հիմնվելով դրանց բաղադրիչների վրա: Երբ ուսանողը կարողանում է տարբերակել, թե տվյալ դարձվածքը պատճառաբանված կամ չպատճառաբանված հիմք ունի՝ արդյոք, նշանակում է, որ նա զգալի առաջընթաց է գրանցել:

Արդյունավետ է ուսուցողական նպատակներով կիրառել դարձվածային միավորները՝ հաշվի առնելով նրանց ձևավորման լեզվական և արտալեզվական գործոնները [18: 24]:

Եզրակացություն

Ուսուցողական մեծ ներուժ ունեն տարբեր ժողովուրդների անուններ, ապրելակերպ, կենսաոճ, մտածելակերպ ներկայացնող ֆրանսերեն դարձվածքները, որոնց բաղադրիչ բառերի վերլուծությունը օգնում է հասկանալու տեքստը:

Ֆրանսերեն սովորությանին դարձվածքների ուսուցումը նպաստում է ուսանողների հենքային գիտելիքների ձևավորմանը և զարգացմանը:

Տարբեր՝ վերճանաչողական, ճանաչողական, փոխհաստոցման ռազմավարությունների կիրառումը նպաստում է դարձվածքների միջոցով ֆրանսիական ավանդույթների, սովորույթների ուսուցմանը, մտածելակերպի զարգացմանը:

Կարևոր ռազմավարություն է դարձվածային միավորների հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հայերեն թարգմանությունը, ինչպես նաև դարձվածային միավորների միջոցով ռճական հնարների ուսումնասիրությունը, որն էլ իր հերթին զգալապես նպաստում է ֆրանսերեն դարձվածքների յուրացմանը:

ЛИТЕРАТУРА

1. *Բարլեզիզյան Ա.* Դարձվածքների և արտահայտությունների ֆրանսերեն-հայերեն բառարան: – Երևան՝ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018: – է.է. 271–280:
2. *Բեդիրյան Պ.* Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան: – Երևան՝ ԵՊՀ հրատ., 2011: – 1408 էջ:
3. *Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա.* Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան: – Երևան՝ Երևանի համալսարանի հրատ., 1975: – 634 էջ:
4. *Гак В.Г.* Новый большой французско-русский фразеологический словарь = Le nouveau grand dictionnaire phraséologique français-russe: Le nouveau grand dictionnaire phraséologique français-russe: более 50000 выражений / [В.Г. Гак

- и др.]; под ред. В.Г. Гака. – М.: Рус. яз. – Медиа, 2005 (ОАО Можайский полигр. комб.). – XX, 1624 с.
5. *Евдокимова М.Е.* Способы формирования метакогнитивных умений студентов при обучении иностранному языку // Вестник МГЛУ. Образование и педагогические науки. Вып. 2(796). – М., 2018. – СС. 111–126.
 6. *Лапаева Е.Ю.* Способы реноминации разговорных фразеологических единиц во французских художественных переводах // Филологические науки. Вопросы теории и практики, Т. 13. Вып. 12. – Тамбов: Грамота, 2020. – СС. 167–172.
 7. *Лиходкина И.А.* Фразеологизмы как элемент разговорной речи и особенности их перевода (французско-русские параллели) // Филологические науки. Вопросы теории и практики: в 3-х ч. Ч. I, № 8(50). – Тамбов: Грамота, 2015. – СС. 113–116.
 8. *Саргсян Р.Р.* Использование компенсаторных стратегий на уроке иностранного языка: Таксономия Р. Оксфорд в действии // Вестник АГЭУ, 2020. – Ереван, 2020. – СС. 229–243.
 9. *Фирсова Н.М.* Языковая вариативность и национально-культурная специфика речевого общения в испанском языке: Учеб. пособие / Н.М. Фирсова. – М.: Изд-во Рос. ун-та дружбы народов, 2000. – 127, [1] с.
 10. *Эйснер С.Н.* Сопоставление семантики некоторых фразеологических единиц библейского происхождения во французском и русском языках // Вестник МГЛУ, № 2(791). – М., 2018. – СС. 202–210.
 11. *Barlézizian A.* Stylistique du français modern // Lingva, 2010. – Erevan, 2010. – PP. 16–22.
 12. *Barlézizian A.* Précis de lexicologie du français modern. Moughni, 2011. – PP. 77–83.
 13. *Chamot A.U., Robbins J.* The CALLA Model: Strategies for ELL Student Success. Workshop for Region 10, New York City Board of Education, New York, NY April 15, 2005. – 34 p. [Electronic resource]. – Mode of access: https://www.researchgate.net/publication/268345515_The_CALLA_Model_Strategies_for_ELL_Student_Success (Date of access: Dec 20, 2024).
 14. Dictionnaire de la conversation et de la lecture: inventaire raisonné des notions générales les plus indispensables à tous, par une société de savants et de gens de lettres. – Т. 2 / Sous la direction de M.W. Duckett [Electronic resource]. – Mode

- of access: <https://gallica.bnf.fr/ark:/12148/bpt6k308014/f340.image#> (Date of access: Dec 20, 2024).
15. *Guillemard C.* Les Mots d'origine gourmande. – Paris: Belin, 2000. – 288 p.
16. Les expressions françaises décortiquées, explications sur l'origine, signification, exemples, traductions [Electronic resource]. – Mode of access: <https://www.ex-pressio.fr/> (Date of access: Dec 20, 2024).
17. *Norrick N.R.* How proverbs mean semantic studies in English proverbs / by Neal R. Norrick. [etc.]: Mouton, cop. Berlin, 1985. – XI, 213 p.
18. *Pennac D.* Aux fruits de la passion, Gallimard, Paris, 1999. – 223 p.
19. *Rey A., Chantreau S.* Dictionnaire des expressions et locutions figures. Les usuels du Robert. – Paris, 1979. – 946 p.

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃԻ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Դ. Գյուրջինյան
ashkhen.gyurjinyan@gmail.com

*Ֆրանսերենի և ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս,
Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննության է առնվում ֆրանսերենի խոսակցական ոճի դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունը: Ներկայացվում են հիմնականում բառապաշարի և դարձվածանու ուսուցման վերճանաչողական, ճանաչողական, փոխհատուցման ռազմավարությունները: Բնութագրվում են վերճանաչողական ռազմավարության շրջանակում դեկլարատիվ և ընթացակարգային գիտելիքները: Վերճանաչողական ռազմավարությամբ ներկայացվում է դարձվածքների ծագումնաբանությունը: Առանձին ուշադրություն է դարձվել ֆրանսերեն սովորության ղարձվածքների

ուսուցման մեթոդիկայի մշակմանը: Հստակ օրինակներով ցույց են տրվում պատճառաբանված (մոտիվացված), չպատճառաբանված (չմոտիվացված) ֆրանսերեն դարձվածքների ուսուցման, մասնավորապես թարգմանության առանձնահատկությունները: Ֆրանսիական բնականոնները և անձնանունները առաջարկվում է ուսուցանել փոխհաստոցման ռազմավարությամբ, քանի որ հայալեզու ուսանողների անմիջական շփումները ֆրանսիացիների հետ բավարար չեն: **Բանալի բառեր՝** ճանաչողական ռազմավարություն, դեկլարատիվ, ընթացակարգային գիտելիքներ, դարձվածային միավոր:

THE STRATEGY OF TEACHING PHRASEOLOGICAL UNITS OF THE CONVERSATIONAL STYLE IN FRENCH

A. Gyurjinyan

ashkhen.gyurjinyan@gmail.com

*Lecturer at the Department of French and Romance Philology,
Brusov State University
Yerevan, Republic of Armenia*

ABSTRACT

This article examines the strategy of teaching phrasal units of the conversational style of the French language. The main focus is on strategies for teaching vocabulary and phraseology, such as metacognitive, cognitive, and compensatory strategies. Within the metacognitive strategy, declarative and procedural knowledge are characterized. The origin of phraseological units is presented through the metacognitive strategy. Particular attention has been given to the development of a methodology for teaching French usual phraseological units. Clear examples are provided to show the peculiarities of teaching phraseological units, especially in translation, both motivated and unmotivated French phraseological units. It is suggested to teach French toponyms and

anthroponyms using the compensatory strategy, as the direct contacts of Armenian-speaking students with French speakers are insufficient.

Keywords: cognitive strategy, declarative, procedural knowledge, phraseological unit.

Информация о статье:

статья поступила в редакцию 21 декабря 2024 г.,

подписана к печати в номер 14 (18) / 2024 – 25.12.2024 г.